

31. ԲԱՂՎԵՐԱՄՈՒ ՔՑԱՂՔՑԻ ԱՂՉԻԿ

Թակավորմ կէլնի. մեկ տղա ունի: Թակավրու լաճու պնն գյործ ավ անել կէլնի: Ուրիշ երկրի թակավորն խաբար կճամխի էտա թակավրուն. կասի. - Ջի տղա չկա. քյո տղի անունն էլ ես լավ եմ լսե, կխնթրեմ. որ ճամխես գյա մոտս. քյանիմ օր տիսնվինքյ. իմ սրտի փափայն առնեմ. էլմ թո տառնա գյն:

Թակավոր ուր լաճ կէօրէոխկի կէրթն մոտ էն թակավոր:

Խնբար կուտան թակավրուն. թե քյո ուզած մարթն էկավ: Կէլնի ասքյար. չալկի. վազիր-նազիր կէորեոխկի տիմնց. առոք-փառոք կպիրեն թակավրու մոտ:

Թակավոր կէլնի տիմաց. իրեսներ կպաքյի. կնատցուցի. շատ ուրախութեն կանեն. խաց ու կերակուլ կուտեն. պառկեն քյնեն:

Առատուն թակավրու տղեն կէլնի վեր.

- Թակավոր ապրած կէնա. - կասի. - տյու զի հրաման կուտա՞ս՝ ես էրթնմ ավի:

Կասի. - Որդի՛. ինչի՞ կուզես. կնա:

Տղեն կէրթն սար. չուր իրիկուն կֆոա, ուր ավն կանի. կուգյն տուն:

Թակավոր շատ կուրախնա: Ծնպնթմ ինոր իտև կքյնշի: Օրմ թակավրու տղեն թակավրուն կասի. - Թակավոր ապրած. տյու զի հրաման կանե՞ս՝ էսօր էրթնմ Խաս Բաղչեն պտտել:

- Քե հրաման ի. - կասի. - կնա՛:

Տղեն կէլնի. յափունջեն կքյնշե վեր ուր. կէրթն Խաս Բաղչեն. կֆոա, գինե կուգյն վեր ավուզին կնստի. ճյուրմ կխմի՝ մեյ կտոր խանգյստանամ. կասի. ըստեղ: Ցափունջեն կքյաշի ուր գյլեոխ. կպառկի:

Կիրիշկա եղունկներ էկան. իրեքյ խատ էճան վեր ավուզին. ուրենց շապկներ կխանեն. կմտնեն ավազան որ լոխկնան:

Իրիշկաց տեսավ. որ ինոնցից պստիյ քեոր շատ խորոտ էր:

Ցավաշմ ուր յափունջու տկեն ուր գնվնզնն պարզեց. պստիկ եղունկի շապիկ քյնշեց. պիրեց ուր մոտ:

Մեկէլ էրկուս ճրից էկան տյուս. իրենց շապկներ խուգյան:

- Ախչիկ, շոտ արա, - ասին, - էլի էրթանքյ զատն ի մեր տեղ:

- Ես չեմ կանա գա. իմ շապիկ տարած ի:

Ինոնքյ կթոնեն կէրթնն:

Տղեն պստիկ քյեորն առեց յափունջու տակ, պառկավ: Էրկուս սեստեղ քյանիմ սահաթ քնան էնտեղ:

Թակավոր տեսավ, որ տղեն անգյնցավ, ասաց ուր մարթերաց. թե. - Կնացե՛ք, խենքյ էսա տղեն ի՞նչխ էլավ:

Մարթերն էկան տեսան, կնացին թակավրուն ասին. - Թակավոր ապրած, զյլխու տեխ մեկ ի. ոտկեր՝ չորս ի:

Փառք իմ քյեզնից. աստված. ինձի կսաթ չէլավ էտա եղունիկ, իմ խյոգյազնվկին էլավ: Դե՛, քյելե՛ք. պիրե՛ք, իկե՛ք ձեռքյմ խալավ տարեք. խագյուցեք. պերեք:

Մարթեր կնացին թակավրու տղեն ինան աղչիկն առին պիրին:

Թակավոր բաշլայեց խարսնիս՝ յոթն օր. յոթ կիշեր:

Տարան մո մէմեկէլ:

Մնաց, ժամանակմ ընցավ վերեն. ասաց. - Թակավոր ասլրած կէնա. տյու զի հրաման կուտա՞ս. որ ես էրթամ իմ հայրենիք:

- Քյեզի հրաման ի:

Տղեն էլավ ուր չափին մալ պոնեց: Դաւվեքյ իպե պառոցեց, ճամխու իտիր, էկավ ուր խոր երկիր:

Թակավրու ախպոր տղեն էն որ լաճ կնացեր էր. թակավրուն սպաներ էր. նստեր էր տեղը. որ լանվ. թե լաճ կուգյա. կապմ իտիր ուր վիզ, իտուր մարթում ծեռ. էլավ կնաց մո թակավրու լաճ:

Ասաց. - Ջան՛մ. էտա ի՞նչ ի, խերս մեռեր ի. ես էնտեն չեմ էլե, տյու ես նստե թախթ, ի՞նչ կա որ: Տաոցի կնա քյո տեղ, էլա նստի քյո թախթ:

Թակավոր տաոցավ կնաց նստավ ուր տեղ:

Խին թակուխուն տարած տրած խավու թառի տակ, արած խավերաց պախապան. մկա հնոր տեղն էն ի:

Թակավոր հրաման արաց. ասաց. - Կնացեքյ ասեքյ թակավրու լաճուն, որ ուր տեղն էն խավի պեռն ի. թող ուր կան-չկան տանի լցի ղան:

Տղեն ուր էլած-չէլած տարավ լցեց ղան:

Նստան. խետ ուր մոր. խետ ուր կնգյանն. կերան, խման. - Է՛, - ասաց, - մայրի՛կ, իմ խեր մեռե՞ր ի, թե չէ սպանած ի:

- Մեռեր ի. - ասաց:

- Վնաս չունի. մայրի՛կ ես առատուն կէրթամ ավի, տյու կիտես, քյո խարս:

Էլավ լաճ, կնաց նեճիր: Նեճիր արաց, առեց էկավ: Կնիկն էլավ թիվեն առեց տակ: Ինքյն կնաց նստավ. ասաց. - Դե՛, մեյ կտոր քյաբաբ արեքյ ուտենքյ:

Խրոխպոր լաճ որ նստեր ի թակավոր. պիտի փսայվի. էլավ ծանդր անդիեմ, իտուր մարթու ծեռ. էօրեռխկեց թակավրու լաճուն:

Ասաց. - Առավոտ գյաք խարսնիս:

Թակավրու լաճն էլավ նամակմ գյրեց: Ես չեմ իգյա, որ կուգյան, թռ մերս խե խարսին գյան:

Իտուր խնդրանկին, ասաց. - Տա՛ր նամակ, տուր թակավրուն:

Թակավորն ասաց. - Վնաս չունի. սարի մսրթ ի, սարն ի ճեռչուցե. թռ կնիկ, մեր գյան. խերիքյ ի:

Առատուն թակավրու լաճն էլավ կնաց նեճիր:

Թակավոր էլավ խնդրանկմ ճամխեց. պառվուց մեյ մաղ իլին խավի ծյու ուզեց:

Պառավն էլավ սաղ իլին լցեց: Խարսն ասաց. թե. - Խաթյուն կիսու՛ր. մաեար քյանգ՝ իմ իրիկ զոռբա է՞լ կա:

Ասաց. - Խարսե՛. թակավորութենի: Խավի ծյուն առեց էտա մարթ կայնավ, խարս փնարդեն ի պաց. մեյ խատ էտա խանդրնկ իրիշկաց տեխ խարս: Մաղ ծեռնից ինգյավ. խավի ծվներ կոտրաան:

- Ինչխ անեմ. որ կոտրվավ, - ասաց խարսն:

Կիսուր էլնվ մաղմ էլ լցեց. - Դե՛. առ կնա. - ասաց. - էլ մի՛րիշկա:

Խանդրնկ տարավ իտուր թակավրուն. անաց. - Թակավոր ապրած կենա: Խրոխպորդ տղեն կնիյմ ի պիրե. ճրաքյի պես կվանվի. ինչ որ տեսա՝ խավի ծվի մաղ ծեռնեն ինգյավ տակ. խավի ծվներ բյություն կոտրաան:

Ցիրիկուն լաճն էկավ:

Խաարսն էլավ վեր. նեճիր թիվեն առեց. քյանբանբ շինեց, կերաան, խման. պառկան քյնան: Առատուն թակավրու լաճն էլնվ վեր, ասաց. - Մայրի՛կ. առ քյո խարս. կնանցեքյ խորոխպորս լաճու խարսնիս:

Սանդկի պալնիսն իտուր կնգյնան, ինքյ թողեց կնանց:

Կնանց սար. կիսուրն էլնվ ուր խարսին ասաց. - Դե՛, էլի քյո խալավ խագյի:

Սանդկի տյուտ իպաց. ուր եղունկի շապիկ սանդխեն իխաան. շատ ուրախցավ. իտիր սանդկի մեջ էլմ:

- Դե՛. խաթյուն կիսուր, դե՛ էլի:

Էլաան կնացին թակավրու տուն: Մինչև վերճնանց քյեֆ, ուրախութեն արին:

- Դե՛. խաթյուն կիսուր. - ասաց. - Երթանքյ:

Էլաան էնտեղեն. էկան տուն:

Թակավրու լաճն էկավ: Էլնվ նեճիր թիվեն առեց կնիկն: Շատ ուրախ ի: Խացի պատրաստութեն տեսավ. կերակուլ կերաան:

Թակավրու լաճն ասաց. - Կնի՛կ. տյու էսօր շատ ուրախ ես. չեմ կիտե՝ կնանցեր ես խարսնիս. իկեր ես. տյու՞ց ուրախ ես:

Կասի. - Ես վեր քյե ուրախ եմ:

Առատուն ի լաճն էլնվ վեր, կնաց ավի: Խարսն էյնվ ուր եղունկի շապիքյ խագյավ. թոավ փենջանրեն:

Կիսուրն ասաց. - Ի՞նչ կերակուլ իփեմ:

Ասաց. - Ի՞նչ կիփես իփե. ի՞նչ էլ իփես, մենակ կուտես:

Ասաց. - Խարսի՛կ. մ՞ծոե. տյու դեռ՞ ես. քյո ծեն պանցրեն կուգյն:

Ասաց. - Խաթյուն կիսուր, իրիշկա՛. տե՛ ես դեռ՞ եմ:

Կիսուր իրիշկաց. խարս գյեռ թոե փենջանրեն:

Կասի. - Խաթյուն կիսուր, քյո լաճ որ կուգյն իրիկուն. չի գյն. չի կնդնի զի. որ գյն կնդնի. Բաղվերամու քյաղաքյ թո գյն, ես էն տեղ եմ:

Ասաց, թոավ կնանց:

Իրիկուն լաճն էկավ: Մեր լանլեղեն էլնվ կայնավ իտոր նեճիր թիվեն առեց:

Տղեն ասաց. - Մարե՛. քյո խարս դեռ՞ ի:

Կասի. - Որդի՛. խարս կնանց:

- Ի՞նչխ կնանց:

- Պանմ խագյավ. թոավ փենջանրեն. թոավ կնանց:

- Է՛. իսկի ի՞նչ ասաց:

Ասաց. - Չի գյա. չկնդնի զի. որ գյն կնդնի, Բաղվերամու քյաղաքյ թո գյն. զի կնդնի:

- Է՛, - կասի, - մարե՛, դե մնացիր պանրի, ես կէրթամ:

Էլավ քյելեց: Կիշեր ցերեկ՝ քյելեց: Կնաց ուր խին թակավրու քյաղաք էլավ տյուս:

Ջյույմբ տվին թակավրուն, թե քյո խոգյնզավակ իկեր ի:

Էրկու մարթու ասաց. - Կնանցեք պիրեք:

Էկան լաճն աւին կնանցին մո թակավոր:

Թակավրու ծնո ապաքյեց: Թակավոր հրաման արաց նստոցուց: Իսկի խաբար տալ չի գյուս լաճու մտեն:

- Է՛, - կասի, - որդի՛, տյու ընչի ըսկնեմ տրտմեր ես, քյե ի՞նչ իլե:

Կասի. - Թակավոր ապրած կենա, իմ կնիկ թռե կնացե:

- Է՛, - կասի, - որդի՛, էսա մուրուս էն իրեք քյեոր սիվտկցուցին, ես չկարցա մեկն պոնի: Արե՛, վազ կաց ինոնց մտեն: Ես կէրթամ Ցուրյուշ թակավրու աղչիկ պիրեմ քյե:

Կասի. - Թակավո՛ր, չէլած պան ի, ես պիտի ֆռամ, չում իմ կնիկ կնդնեմ:

Կասի. - Որդի՛, էլի կնա սար, զի արծիվ խասվքմ կա էն սար, շատ խալիվոր ի, թե որ էն սալախ տա, քյո կնգյն խոր քյաղաքյ:

Տղեն էլավ կնաց սար, մոտ արծիվ խավքյ:

- Պարև քյե, - ասաց:

Ասաց. - Պարին:

- Խավքյ, - ասաց, - ես իկեր եմ մո քյե:

Ասաց. - Ընչի՞ ես իկե:

- Իկեր իմ, որ տյու զի ճամբանմ շանց տաս, Բաղվերամու քյաղաքյ դեռ՞ր ի:

Ասաց. - Հա՛յ, քյու ուսուցողի վիզ կոտրի: Ես ճեռճացեր եմ, իմ փետուրներ թափեր ի, տյու որ էկար մո զի՝ պիտի ես քյե տանեմ. էլի կնա թակավրու մոտ, զի խամար քիչմ տմանկ պե, որ ես ուտեմ, իմ կարողութեն գյան վեր զի, որ քյե տանիմ:

Լաճն էլանվ վեր. էկավ թակավրու մոտ:

Ասաց. - Զի քսան եռսուն խատ տմակ տու:

Թակավորն ասաց. - Պատրաստ ի, առ կնա:

Տղեն առեց կնանց մոտ խավքյ: Իտիր տմայներ խավքյու առճև, մեկ էրկյ օրմ կերավ:

Ասաց. - Ես մեյ խատ պիտի էլնեմ զի փորձեմ: Էլանվ քիչմ թռավ, քիչմ պանցրացավ, իճավ տակ. ասաց. - Հալա կարողութեն չունեմ:

Ծապաթմ էլ կերավ, խավքյն ուր ուժն առեց, ասաց. - Դե էլի նստի վեր իմ քյամկին:

Նստավ վեր քյամկին, խավքյ վիրցավ էրկինքյ: Ծա պանցրացավ:

Տղին ասաց. - Մեյ խատ քյո աչկեր պաց:

Աչկեր ի պաց:

- Աշխարքյ, - ասաց, - քյանի՞մ կերևա:

- Մեյ թաբաղա թխթի գեորա կէրևա սիվդկութեն:

Խավքյն ասաց. - Հելե շատ կա: Ցանցրացավ:

- Դե՛, - ասաց, - աչկերտ պաց խեմ:

Ասաց. - Էլ պան չէրևա:

Էրկինքյ ճյուր, ցածր ճյուր:

Խավքյն էճավ, իտիր ծովու էնդեխաց պոուկ:

Ասաց. - Դե՛, էլի էսա կապուտ քյար շոճի:

Տղեն քյար շոճեց, գյանմ տկեն խանեց:

Ասաց. - Թաթխի ծովու մեչ:

Տղեն թաթխեց, ծին էկավ. մեկ սև. մեկ սիվտակ, մեյ կարմիր: Առեց իտոնց պոչից մեյ մեյ սեյ մազ:

Խավքյն ասաց. - Դե՛. մնացիր պանրի, ես կէրթամ, ի՞նչ վախթ ծիյու մազեր տաս կրակ, ինոնքյ կուգյանն:

Կէլնի ծիյանքյ կշիտկի մըչ ծովուն. կէրթաս մեչ էտա քյաղքյին: Կէրթան պառվում տյուտ կթփի:

Պառավ կուգյան տյուտ կպանն:

Կասի. - Պառա՛վ, մսաֆր կպախե՞ս:

Կասի. - Մսաֆր աստծուն ի. նստի էտա տեղ. առատուն թո կնես:

- Է՛, - կասի, - պառա՛վ. էսա ի՞նչ քյաղաքյ ի:

- Որդի՛, էսա Բաղվերամու քյաղաքյն ի:

Կասի. - Պառա՛վ, իմ կնիկ փախե իկե ըստա, ի՞նչխ պիրեմ:

Կասի. - Որդի, էլի կնա Է՛նա տեղ, սադսանեքյ էնդեն խարսնիս կանեն: Կնաս մեչ ինոնց խարսնսին, քյանիմ փանրն տուր վեր ինոնց խարս փեսի գյլխուն, չվանխենաս, մեյ կուգյան, կասի՝ զանրկեքյ. մեյ կուգյան կասի՝ թո ինգյնանվորի, մեյն էլ կասի՝ ընչի՞ կզարկեքյ. ջանմ. խեղճ ի. առատմե իկեր ի վեր մեր խարս փեսին շանբանշ կուտա:

Տղեն կնանց խարսնսի մեչ մտավ. վեր խարս փեսի գյլխուն շանբանշ կուտա: Մեյ կասի՝ զարկեքյ. մեյ կասի՝ զանրենքյ. թող ընգյնանվորի. մեյն էլ կասի՝ ընչի զանենքյ. խեղճ ի. չուր մկա մեր խարս ու փեսի վերեն շանբանշ կուտա:

Խարսնիս կցրվի:

Սատանի փեսեն կկանչի էն լաճուն. կասի՝ պիրեքյ տվեքյ իսոր թող էրթան:

Տղեն կասի. - Ի՞նչ անեմ ծեր ադիեքյ. ծեր խարս փեսի սանդաղեն. մե խա խին քյոլոզմ տվեքյ. տանեմ գյլեոխս. գյլեոխս կմրսի:

Կպերին խին քյոլոզմ կուտան. կսանի կուգյան: Կէրթան պառվու տուն:

Կասի. - Որդի՛, տյու էկա՞ր:

Կասի. - Խա՛. ես էկա: Պառա՛վ. մեյ խա խին քյոլոզ մի տված զի. մեյ խատ առ տիր քյո գյլեխ խեմ:

Պառավ կտնի ուր գյլեոխ. լաճ էլ պառվուն չտեսնա:

Կասի. - Պառա՛վ. տյու դեոր ես. ես քյե չեմ տեսնա:

Պառավ քյոլոզն գյլխուց կառնի տակ, կուտա լաճուն. կասի. - Որդի՛, շա՛ լավ պանն ի. մէ խատ էլ տյու տիր քյո գյլեոխ խեմ:

Տղեն կտնի գյլեոխ. կասի. - Որդի՛. ես էլ քյե չեմ տեսնա. ասա տակ:

Քյոլոզ կառնի տակ: Կնստեն կուտեն. կխմեն:

- Է՛, - կասի. - որդի՛. դեղ, էլի տիր գյլեոխտ, կնան քյո կնգյան մոտ. էլ մարթ քյե չտիսնա:

Տղեն կառնի քյոլոզ. կտնի ուր գյլեոխ. կէրթան մո կնիկ: Կմտնի էօդեն. կիրիշկա. որ կնիկ պառկեր ի մեչ յաթղին. բեսլամեքյ կող կուշտ նստած. մեյ խատ կխասնի կնգյան իրես կպանն. պաքյի:

Կնիյ կէլնի փետ կառնի քեոլամեյիտերաց կթփի. կմլի տյուս:

Կասի. - Տյուքյ ընչի՞ չեքյ թոնե ես տանտարեմ:

Կուգյն. կպառկի էլմ: Պառկելու միջոց. տղեն էլմ էլ կէրթա ինոր իրես կպաքյի: Վարհապլի չթոնե կնիկ տաւտարի:

Կնիկ կասի. - Աստծու սիրուն. վո՞վ կա իմ էօդեն. թո էլնի տյուս. ես կպաստեմ:

Տղեն ուր քյուլախին կառնի տակ. կնստեն. կուտեն. կխմեն. կէլնեն կպառկեն:

- Է՛. - կասի լաճուն. - խորոտ գյլխուտ վերեն կան էկա՞ր. որ ոտկերացդ կաղր կիտնաս:

Քանիմ օր վերչ ուրիշ թակավոր ինքյին արաց. էկավ: Քյաղքյի կող պյուլեոր պաշարեց: Էն քյաղքյի թակավոր կնաց մոտ ուր եղունիկ աղչիկ:

Ասաց. - Է՛. աղչի՛կ. տյու իրիկ իր առե. ընչի՞ էկար: Մ'կա էլ ֆիլան թակավոր առե ուր ասքյինն իկե վեր մեր քյաղքյին. որ քյե տանի:

Աղչիկն վերուց խոր կասի. - Կնա՛, քյե էրկու խատ էլ աղչիկ կա՝ սեկն տու. թո տանեն:

- Ձեն տանի. իլլա՛ հ քյե կուզեն:

- Քյո՛ ճեոչ ասղչկա քյումբեթն ոսկի ի, օրթանջի աղչկան՝ արծաթ ի. իմ՝ պղինձ ի, ընչի՞ ոսկին. արծաթ կթողնեն, կուզյան տեխ պղինձ:

Կասի. - Աղչի՛. քյանի տյու կաս. ինոնքյ մարթ չտանե. պիտի զոռով քյե տանեն:

Կասի. - Էս տեր ունեմ. մարթ չկանա զի զոռով տանե:

Թակավոր կէլնի կէրթա ինսքյար կառնի. որ կոիվ անի:

Լ.ուճն կէլնի սև ծիյու մազ կուտա կրակ, կխեծնի սև ծին, կինի մեչ ինքյրին: Իսան չպոծնի. բյութուն կկոտորի:

Մին կշիտկի կէրթա մեչ ծովուն, ինքյ կթողնի կուգյն ուր տեղ:

Թակավոր կլնի կուգյն մոտ աղչիկ էլմ:

Կասի. - Աղչի՛կ. էսօր սև ծիյավորմ էկավ. ինգյնվ մեչ էդա գորքերաց. իսան չպոծավ. ամբողջ կոտորեց. չեմ կիտե վո՞վ էլնել:

Աղչիկն ասաց. - Ես ի՞նչ կիտեմ. վո՞վ ի, տյու կիտես՝ քյո կոիվ:

Մ'եկէլ օր ըսկում էլ զորք կուգյն, թակավոր էլմ կուգյն մոտ աղչիկ:

- Էլմէլ էտա մարթ էկավ կոտորեց էսօր, ի՞նչխ անենքյ:

Զորս խա խալիվոր ի մնացե մեր քյաղքյի մեչ: Ես չեմ կիտե. ինչ կանե. արա. զի տեր կա:

Թակավոր կէլնի կէրթն: Ուր զորքեր կժողվի. կայնի դիմնց դիմնց. սանդնլիեն թնլի նստե. լաճն կէլնի վեր. ուր քյուլախ կտնի ուր գյլեոխ. կէրթն ծովու պերան. մազ կուտա կրակ. կարմիր ծին կուգյն. կինի մեչ ասքրին. իսան չպոծնի. ամբողջ կկոտորի:

Թակավոր ուր զորք կքյնշի կուգյն. կուգյն էլմէլ մոտ աղչիկ:

Կասի. - Աղչի՛. էսօր կարմիր ծիյավորմ էկավ, իսան չպոծուց, ամբողջ կոտորեց:

Կասի. - Թակավոր. տյու ընչի՞ հն կուգյնս մո զի:

Էլ մի գյն. չեմ խառվե քյո կովուն:

Թակավոր կէլնի թոնի կէրթն: Առատուն կէլնի վեր քնուց, կիշկա՝ ի՞նչ աստղտի հաշիվ կաս. ինքյրին՝ չկա:

Թակավոր լլալեեն էլմ կէլնի կուգյն մո աղչիկ:

- Էլ իմ կարողութեն չխասնի վեր իսոնց. քյե պիտի տամ տանեն:

- Քյե՛ խառվելիքյ չկա խե զի. թակավոր. - կասի աղչիկ, - ես տեր ունեմ. քյու ճեոչ ասղչիկ տու թո տանեն. էլի կնա գյործիդ:

Ճեոչ աղչիկ կէլնի կուգյն մո քյեոր. կասի. - Ադաբսը՛զ նամուսըզ. տարիմ էրկու խորոտ ենքյ ըռհաթե:

- Ի՞նչ անեմ, որ ըոհաթեր եք։ Տախացեր ես. մարթ քյե չտանե, կուգյաս փոով վեր գի՞ կթափես։

Էլի կնա. մի նստե էսա տեղ։

Ճեռչ քեոր լալելեն թոնի կէրթա։

Թակավոր առատուն էլնվ վերուց ասքյար քյուշեց. կայնավ մեկ կողմ. սանդալիեն թալեց նստավ։

Լաճն էլավ ուր քյոլոզ իտիր իր գյլեոխ, կնաց ծովու պերան. մազ իտուր կրակ. սիվտակ ծին էկավ։ Էլնվ խեծավ, էկավ ինգյավ մեչ ասքյրին, ամբողջ կոտորեց, իրեքյ խատ փոթան. լաճն ասաց. - Դե՛, կնացեքյ ծեր թակավրուն ջյուլսաբ տարեքյ. էլ կա թո գյան. Բաղվերամու քյաղաքյի մեչ ըսկնա իգյիթ մարթ կա։

Թողեց էկավ մ թակավոր. թակավոր իրիշկաց տեսավ՝ լաճու մատից արուն կուգյա, ուր ծեռաց մանդիլն իխան փաթյութեց վեր լաճու ծեռաց։

Լաճ ծին շիտկեց մեչ ծովուն։ Ուր քյուլախ իտիր ուր գյլեոխ, էկավ մոտ ուր կնիկ. թակավորն էլնվ էկավ մոտ ուր աղչիկ։

Լաճու ծեռաց ալնըխ որ առցկեր էր, թալեր էր տոան իտև։

Թակավոր որ էօդեն մտավ. նստավ էնտեղն. ուր ծեռաց մանդիլ ճանչցավ։

Ասաց. - Աղչի՛, էտա մանդիլ պե գի։

Առեց մանդիլն ասաց. - Աղչի՛. էսա մանդիլի տերն կուզեմ, որտե՞ղն ի։ Էսա մանդիլ կապեր ի վեր ինոր ծեռաց, էսա մարթն կուզեմ խանես տյուս։

Լաճն էլավ սըռ քյուլախին առեց տակ. թակավրու ծեռ պագյեց։

Ասաց. - Առչին անքամի սև ծիյավորն վո՞վ էր։

Ասաց. - Ես ի։

- Երկրորդ անքամի կարմիր ծիյավո՞րն վով էր։

- Ես ի։

- Իտին սիվտակ ծիավո՞րն վով էր։

- Էն էլ ես ի։

- Տյու վո՞ր էրկրեն ես։

- Ես զատ էրկրեն եմ։

- Վի՞ր տղեն ես։

- Ֆլան թակավրու տղեն եմ։

- Լա՛վ, տյու իմ աղչիկ ի՞նչխ կնդար։

- Ես ֆլան թակավրու մոտ դանվաթի եի կնացե. ինոր Խաս Բաղչի մեչ, ավուզի վերեն. քյո աղչիկ պոնեցի. իմ թակավոր գի փսակեց։ Ամիսմ մնացի էտ թակավրու մոտ։ Ամսուց վերչ. հրաման ուզի թակավրուց. էլա կնանցի իմ խոր էրկիր։

Ավուր մեկին էլնվ կնանցի սար ավի. սանդկի պանինս տվեցի քյո աղչկան. էն էլ կէլնի ուր շապիկ կխայնի. թոնի կուգյա։

Էն գյանխ թակավորն կասի. - Որդի՛. ես ծերացեր եմ, կա՛ց էսա տեղ. էլի իմ փոխան թակավոր։

- Ես էլ թակավրում տղա եմ, տյու պե մե իզին տուր, մենքյ էրթանքյ մեր էրկիր։

- Որդի՛, որ տյու կէրթաս. քյե հրաման ի։

Թակավոր կէլնի կէրթա ուր տեղ։ Աղչիկն տուն չի։ Թակավրու ճեռչ աղչիկ և օրթանչի աղչիկ կլնեն կուզյանն մ թակավրու լաճ, կասեն. - Արե՛, պանմ անենքյ, արե իտոր շապիկ, օճախ անենք. տանենք օճխի մեչ վառենքյ, որ էլ չփուխնի գյան, որ մնա քյե կնգյութեն անի։ Եթե որ ըսկուն չանենքյ, կփախի կուգյան։

- Լա՛վ, - կասի տղեն:

Լաճն կէլնի կէրթա՝ մո թակավորն, կասի պատրաստություն տեսի, որ մենքյ կէրթանքյ:

- Քյո պատրաստութեն արդեն տեսնված է: Էլեքյ կնացեքյ:

Թակավրու աղչկա ծեռ կպոնի, կուգյան ծովու պերան, ծիյու մազ կուտա կրակ: Մեկ ինքյ կխեծնի, մեկն աղչիկ: Մեյն էլ իդաց կքյաշեն: Կուգյան էն խին թակավրու ամբողջ մալ կկապեն դանգ, ուղտեր կպիրեն, կպանան, ինոնց ասպած կկանչեն, կթողնեն կուգյան: Կուգյա՝ ուր խոր տուն:

Մեճլիս կանի, կկանչի ուր խոր խին վեզիր, կկանչի ուր խոր խին մարթեր, կասի. - Վազի՛ր, իմ խեր ուր մախո՞վն ի մեռե, թե չէ սպանված ի:

Կասի. - Որդի՛, քյո խեր ուր մախով չի մեռե:

- Ապա ի՞նչխ էլե:

- Քյո խրոխպոր լաճ, որ մկա թակավոր ի, խորդ սպանեց, նստավ թակավրութեն կանի: Մեզի էլ ամբողջ տյուս իխան:

Ջուխտմ ջանլուտ կանչեց թակավրու լաճ. - Ի՞նչխ էն իմ խոր սպանեց, - ասաց, - տյուքյ էլ ինոր սպանեքյ:

Ջանլատներ կնացին թակավրուն սպանեցին:

Մեր խին թակավրու լաճն նստավ ինոր տեղ թակավոր:

Էրկնուց իրեքյ խնձոր էճավ, մեյն՝ ասողին, մեյն՝ լսողին, մեյն էլ՝ ականջ արողին: